«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված

«Վանաձորի Հ.Թումանյանի անվան

պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորի 26.12.2016 թ. թիվ 1088 Լ/Կ հրամանի

Հավելված

«Վանաձորի Հ.Թումանյանի անվան

պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորի 29.12.2017 թ. թիվ 1114 Լ/Կ հրամանի

ԿԱՐԳ

ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ, ՎՃԱՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 9 22.12.2016թ.

Փոփոխվել է՝

Արձանագրություն թիվ 9 28.12.2017թ.

Վանաձոր

2017թ.

I.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում (այսուհետ՝ Համալսարան) ուսման վարձի սահմանման, վճարման և վերադարձման գործընթացների իրականացման ընթացքում առաջացող իրավական հարաբերությունները:

II. ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ՎՃԱՐՈՒՄ

2. Համալսարանի և ուսանողի միջև կնքված պայմանագրում պարտադիր ամրագրվում են ուսման վարձի չափը, վճարման ժամկետները:

3. Համալսարանում ուսանողի տեղափոխության, երկրորդ մասնագիտություն ստանալու, միջին մասնագիտական հաստատություններից ուսումը շարունակելու դեպքում ուսանողը վճարում է տվյալ մասնագիտության տվյալ կուրսի համար սահմանված ուսման վարձը:

4. Ուսանողական իրավունքների վերականգնման դեպքում ուսանողը վճարում է տվյալ մասնագիտության (ըստ որակավորման)՝ վերականգնման ուսումնական տարվա համար սահմանված ուսման վարձը:

5. Ներքուհական տեղափոխության գործընթացում ուսանողը տեղափոխության կիսամյակի համար վճարում է մեկ անգամ՝ նախորդ պայմանագրով ամրագրված ուսման վարձը:

6. Ուսումնառությունն ընդհատած ուսանողը[1] ուսումը շարունակելու դեպքում վճարում է պայմանագրում նշված ուսման վարձը:

7. Ուսումնառությունն ընդհատած ուսանողը ուսումը շարունակելու դեպքում նույն մասնագիտության համապատասխան կուրս չլինելու դեպքում կցագրվում է հարակից մասնագիտության համապատասխան կուրսին՝ վճարելով պայմանագրում նշված ուսման վարձը:

8. Ուսումնառությունն ընդհատած ուսանողը ուսումը շարունակելու դեպքում իր դիմումի համաձայն ուսուցման համակարգի փոփոխության դեպքում վճարում է տվյալ մասնագիտության տվյալ կուրսի համար սահմանված ուսման վարձը:

9. Ուսանողը ուսումնառության առաջին կիսամյակում կիսամյակային վճարը չմուծելու և ուսումնառությունն ընդհատելու դեպքում՝ հետագայում ուսումը շարունակելու ժամանակ վճարում է ուսումնառությունը շարունակելու ուսումնական տարվա համար սահմանված ուսման վարձը:

10. Առարկայական տարբերությունների արդյունքում առաջացած կրեդիտներ ձեռք բերելու համար ուսանողը վճարում է համարժեք կրեդիտների արժեքի չափով, բացառությամբ սույն կարգի 6,7 և 8 կետերի դեպքերում:

ՄՄՈՒՀ-ի բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ Համալսարանում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակող ուսանողների առարկայական տարբերությունների արդյունքում առաջացած կրեդիտներ ձեռք բերելու համար սահմանել 10.000 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր առարկայական տարբերության համար:
(ընդունված ռեկտորի 29.12.2017թ. 1114 Լ/Կ հրամանով)

---

[1] ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թ.նոյեմբերի 17-ի N 1242-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման» կարգի 10-րդ կետ

11. Ուսանողների շարժունությամբ պայմանավորված՝ որոշակի ժամանակահատվածով այլ բուհերում ուսումնառած ուսանողները վերադարձից հետո առաջացած առարկայական տարբերությունների համար վճարում են համարժեք կրեդիտների արժեքի չափով:

12. Ավարտական ամփոփիչ քննության մասնակցության համար նախորդ տարիներին ամփոփիչ ատեստավորմանը չմասնակցած կամ «անբավարար» գնահատական ստացած նախկին ուսանողը վճարում է համարժեք կրեդիտների արժեքի չափով՝ ըստ տվյալ մասնագիտության սահմանված վերջին ուսման վարձի:

13. Ուսման վարձը կարող է փոխանցվել (մուծվել) ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից:

14. Առանձին դեպքերում թույլատրվում է ուսման վճարը վճարել մասերով մինչև քննաշրջանի սկիզբը՝ Համալսարանի կողմից սահմանված ժամկետներում:

15. 14-րդ կետը չի տարածվում տեղափոխության, ուսանողական իրավունքների վերականգնման, երկրորդ մասնագիտություն ստանալու, միջին մասնագիտական հաստատություններից ուսումը շարունակելու գործընթացի ժամանակ տվյալ կիսամյակի ուսման վարձի վճարման դեպքերի վրա: Կցագրված ուսանողը տվյալ կիսամյակում ուսման վարձը վճարում է ամբողջությամբ:

16. Սահմանված կարգով և ժամկետներում ուսման վարձ չվճարած անձինք հեռացվում են համալսարանից:

17. Առարկայական տարբերությունների համար մեկ կրեդիտի արժեքը որոշվում է.

17.1.առկա ուսուցման համակարգում.

ուսումնական պլանով նախատեսված 1 կրեդիտի արժեքը որոշվում է.

$$1\ \text{ԿՐԵԴԻՏԻ}\ \textit{ԱՐԺԵՔԸ} = \frac{\text{ՏՎ}}{60}$$

որտեղ՝

ՏՎ-ն՝ Տարեկան Վարձն է՝ համաձայն ուսանողի հետ կնքված պայմանագրի

60-ը՝ 1 ուսումնական տարում հատկացվող կրեդիտների քանակն է:

17.2

ուսումնական պլանով նախատեսված1 կրեդիտի արժեքը որոշվում է.

$$1\ \text{ԿՐԵԴԻՏԻ}\ \textit{ԱՐԺԵՔԸ} = \frac{\text{ՏՎ}}{48}$$

որտեղ՝

ՏՎ-ն՝ Տարեկան Վարձն է՝ համաձայն ուսանողի հետ կնքված պայմանագրի

48-ը՝ 1 ուսումնական տարում հատկացվող կրեդիտների քանակն է:

17.3 Կրեդիների հաշվարկը կատարվում է վարձավճարների սահմանման վերաբերյալ տեղեկանքի մեջ (Հավելված 1):

III. ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՎԵՐԱԴԱՐՁՈՒՄ

18. Ուսանողի հեռացվելու, ազատվելու դեպքում տվյալ կիսամյակի ուսման վարձը չի վերադարձվում:

19. Որպես բացառություն՝ հետագա ամիսների ուսման վարձը կարող է վերադարձվել՝ երբ ուսանողն առողջական պատճառներով ի վիճակի չէ ուսումը շարունակելու և ներկայացնում է բժշկական համապատասխան փաստաթուղթ: Այդ դեպքում վերադարձման ենթակա գումարը պետք է համապատասխանի ուսուցում չանցած ժամանակին:

20. Ուսման վարձից ավելին վճարված գումարը վերադարձվում է՝ ուսանողի դիմումի համաձայն:

21. Կազմակերպության կողմից ավել վճարված ուսման վարձը փոխադարձ համաձայնությամբ վերադարձվում է նույն կազմակերպությանը:

22. Այլ բուհ տեղափոխված ուսանողին կարող է վերադարձվել վճարված ուսման վարձի համապատասխան մնացած մասը՝ ընդունող բուհից տեղափոխության վերաբերյալ տեղեկանք ստանալուց հետո, հաջորդող ամսվա 1-ի դրությամբ:

23. Փոխատեղման արդյունքում անվճար համակարգ տեղափոխված ուսանողին վերադարձվում է լրիվ կամ մասամբ վճարված ուսման վարձը:

Հավելված 1

ՏԵՂԵԿԱՆՔ
ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

20___ - 20___ ուստարվա _____ կիսամյակում

_____ մասնագիտության _____ ուսուցման
մասնագիտության անվանումը /առկա, հեռակա/

համակարգի _____ կուրսում 20_____ թ. թիվ _____ հրամանով
/կուրսը/ /հրամանի համարը/

կցագրված ուսանող _____.:
/ անունը, հայրանունը, ազգանունը/

I. Առարկայական տարբերությունների արդյունքում առաջացած կրեդիտներ

20___ - 20__ ուստարվա _____կիսամյակում պետք է հանձնի ներքոհիշյալ առարկայական տարբերությունները

Հ/հ	Առարկաները	Կրեդիտը	Կրեդիտի արժեք
1			
2			
3			
4			
	Ընդամենը		

II. 20___ - 20___ ուստարվա _____ կիսամյակում ուսումնասիրվող առարկաների կրեդիտներ

Հ/հ	Ուսումնասիրվող առարկաները	Կրեդիտը	Կրեդիտի արժեք
1			
2			
3			
4			
	Ընդամենը		

III. 20___ - 20__ ուստարվա _____ կիսամյակում

նախկինում ուսումնառած առարկաների կրեդիտներ

Հ/հ	Ուսումնասիրած առարկաները	Կրեդիտը	Կրեդիտի արժեք
1			
2			
3			
4			
	Ընդամենը		

Ծանոթություն. 20__ - 20___ ուստարվա _____ կիսամյակում ազատել նախկինում ուսումնառած ներքոնշյալ առարկաների ուսումնական պարապմունքներից՝ փոխանցելով համապատասխան կրեդիտները.

_____ ֆակուլտետի դեկան_____ /_____/

/ստորագրություն / / անուն, ազգանուն

_____- ի

20___ - 20___ ուստարվա _____կիսամյակում պետք է վճարի

ընդամենը _____դրամ*:

Գլխավոր հաշվապահ_____/_____/

/ստորագրություն/ / անուն, ազգանուն/

Ծանոթություն.*Վերականգնման կիսամյակի վարձավճարը սահմանվում է «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման(ազատման) և վերականգնման» կարգի /Կրթության և գիտության նախարարի 2011թ. նոյեմբերի 17-ի թիվ 1242-Ն հրաման/ 5-րդ կետի համաձայն:

**Հաջորդ կիսամյակների վարձավճարը սահմանվում է վերականգնման հրամանով և պայմանագրով և ենթակա է վերանայման միայն կրեդիտների ավելացման կամ փոխանցման պատճառով:

Տեղեկացված եմ**_____/_____/

/ստորագրություն/ / Ուսանող անուն, հայրանուն, ազգանուն/